Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Ծիկահողին և հարակից գյուղերին շտապօգնության մեքենա տրամադրելու» ծրագիր

Երևան՝ 29 հունվարի, 2025թ.

2025 թվականի հունվարի 29-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցավ «Ծիկահողին և հարակից գյուղերին շտապօգնության մեքենա տրամադրելու» ծրագրի ավարտական արարողությունը: Արարողությանը ներկա էին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՈԿԻ Յուտական, Սյունիքի մարզպետ պարոն Ռոբերտ Ղուկասյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ տիկին Նարե Ղազարյանը, ինչպես նաև բուժաշխատողներ և տեղի բնակիչներ:

Այս ծրագրի նպատակն էր տրամադրել մեկ շտապօգնության մեքենա՝ Ծիկահող գյուղից և հարակից հինգ գյուղերից շտապօգնության հիվանդների և տուժածների անվտանգ տեղափոխումը Կապանի բժշկական կենտրոն կազմակերպելու համար: Այս ծրագրի արդյունքում վերոնշյալ համայնքների մոտ 1050 բնակիչներ հասանելիություն ունեն օգտվելու անհրաժեշտ շտապ բժշկական օգնության ծառայություններից: Ծիկահողի կլինիկայում երկար ժամանակ շտապ օգնություն չկար, իսկ արտակարգ իրավիճակներում հարակից համայնքների հիվանդները ստիպված էին շտապ օգնություն սպասել 13-50 կմ հեռավորության վրա գտնվող Կապանի բժշկական կենտրոնից, տեղափոխումը տևում էր մինչև 4 ժամ. հետևաբար, այս ծրագիրն անդրադարձել է նման հրատապ մարտահրավերներին:

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը շնորհակալություն հայտնեց նշելով, որ ՝ « Մեր մարզի լեռնային լինելու պատճառով տրանսպորտը միշտ ժամանակատար է եղել, սակայն Ճապոնիայի կողմից տրամադրվող շտապօգնությունը որակյալ է և հնարավորություն է տվել ավելի արդյունավետ փոխադրում իրականացնելու: Լեռնային Ղարաբաղից բազմաթիվ փախստականների հոսքի հետ կապված տարբեր մարտահրավերների ենք բախվում, ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել աջակցության համար, որն ուղղված է տեղի բնակիչների հրատապ կարիքներին»:

Նկար շտապօգնության մեքենայի դիմաց

Դեսպան Առկին շնորհավորանքի խոսքեր ուղղեց շահագրգիռ կողմերին

Դեսպան Առկին ուսումնասիրեց շտապօգնության մեքենան

Այս ծրագրով տրամադրված շտապօգնության մեքենան